ՀՏԴ : 929:947.925Իվանե Երկայնաբազուկ+726(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-169

ԻՎԱՆԵ ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԸ՝ ՊՂՆՁԱՀԱՆՔԻ (ԱԽԹԱԼԱ) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՂ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԱԼԱԼՅԱՆ*

Հղման համար. Ջալալյան Ալեքսանդր: «Իվանե Երկայնաբազուկը՝ Պղնձահանքի (Ախթալա) Ս. Աստվածածին եկեղեցու կառուցող»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2024): 169-182 DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-169

Արևելաքրիստոնեական մշակույթի առանձնահատուկ և ինքնատիպ երևույթ է հայ քաղկեդոնականների ստեղծագործությունը, մասնավորապես ճարտարապետությունը, որը ցայսօր չի գտել իր արժանի տեղը հայ արվեստի պատմության մեջ: Երկաբնակ հայերը, ում համար առավել բարենպաստ պայմաններն էին ստեղծվել XII-XIII դարերում, ակտիվ գործունեություն են ծավալում Հյուսիսային Հայաստանում, կառուցելով մի շարք վանքեր ու եկեղեցիներ: Մասնավորապես Իվանե Երկայնաբազուկի հովանավորությամբ կառուցվում են Թեժառույքի, Կոշի եկեղեցիները, Հնեվանքի գավիթը և, վերջապես, Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցին, որը դառնում է ժամանակի ամենանշանավոր քաղկեդոնիկ տաճարը:

Պղնձահանքի վանական համալիրը գտնվում է Լոռու մարզի Ախթալա քաղաքում, պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Տաշիրք գավառում: Վաղ միջնադարում բնակավայրը հայտնի է եղել Ագարակ անվամբ: Միջին դարերում այն ներկայանում է որպես Պղնձահանք, ինչը կապված է տեղանքի հարուստ պղնձի հանքերի գոյության հետ: Ախթալա անվանումը բնակավայրը ստացել է ուշ միջնադարում:

Պղնձահանքի ամրոցը կառուցվել է X դարում Կյուրիկյան Բագրատունիների տիրապետության օրոք: Ազգատոհմը XII դարի սկզբներին կորցնում է իր ազդեցությունն ու տիրույթների զգալի մասը: XII դարավերջին վանքը որպես սեփականություն անցնում է Զաքարյաններին: Քաղկեդոնականություն ընդունած Իվանե Երկայնաբազուկն այստեղ կառուցում է Ս. Աստվածածին եկեղեցին՝ վանքը վերածելով երկաբնակ հայերի ամենանշանավոր հոգևոր ու մշակութային կենտրոնի:

Բանալի բառեր՝ Պղնձահանքի Ս. Աստվածածին, Իվանե Երկայնաբազուկ, երկմույթ գմբեթավոր եկեղեցիներ, հայ քաղկեդոնականներ, Ակոռի, Զաքարե Ամիրսպասալար, Հառիճավանքի Ս. Աստվածածին:

Ներածություն

XII դարի երկրորդ կեսին, երբ քաղկեդոնականությունը տարածվում և ամրապնդվում էր Հյուսիսային Հայաստանում, Պղնձահանքը՝ Իվանե Զաքարյան Երկայնաբազուկի ջանքերի և ակտիվ գործունեության արդյունքում վերածվում է երկաբնակություն դավանող հայերի հոգևոր և մշակութային խոշոր կենտրոնի, իսկ վանքի Ս. Աստվածածին եկեղեցին դառնում է ժամանակի գլխավոր ու ամենանշանավոր քաղկեդոնիկ տաճարը: Պատմական, մատենագրական

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի գիտաշխատող, alikjalalyan@yahoo.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 24.11.2023, գրախոսելու օրը՝ 17.01.2024, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

աղբյուրները վկայում են, որ դավանափոխ լինելուց և վանքը քաղկեդոնիկ մենաստանի վերածելուց հետո Իվանե Երկայնաբազուկն այստեղ կառուցում է Ս. Աստվածածինը, որի դիմաց էլ թաղվում է մահանալուց հետո: Այս վկայությունների հավաստիությունը, սակայն, հաճախ կասկածի տակ է առնվել ու մինչ օրս տարբեր հակասական ու անհիմն տեսակետներ են երևան գալիս Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցողի, ինչպես նաև հիմնադրման ժամանակի վերաբերյալ: Վարկածները հիմնված են զուտ պատմական ու մատենագրական տվյալների տարաբնույթ մեկնաբանության, երբեմն էլ՝ եկեղեցու որմնանկարների ուսումնասիրության վրա: Բոլոր դեպքերում, սակայն, ամենևին հաշվի չի առնվում կառույցի ճարտարապետությունն ու դեկորատիվ հարդարանքը: Այնինչ, առանց պատմական փաստերի և եկեղեցու ճարտարապետահատակագծային, տիպաբանական առանձնահատկությունների, համաչափական ու դեկորատիվ լուծումների համադրման, անհնար է ճշգրիտ որոշել եկեղեցու կառուցողին ու կառուցման ժամանակը:

Կարևոր է նաև շինության ճարտարապետության համեմատական վերլուծությունը ժամանակի և մինչ այդ կառուցված նմանատիպ հայկական քաղկեդոնիկ և միաբնակ, ինչպես նաև վրացական եկեղեցիների ամբողջության մեջ:

Հիմնական նյութի շարադրանք

Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցու վերաբերյալ հիմնական տեղեկությունը հաղորդում են Կիրակոս Գանձակեցին [1, էջ 222, 238, 311, 322] և Վարդան Արևելցին [5, էջ 194], որոնք վկայում են Իվանե Երկայնաբազուկի կողմից եկեղեցու կառուցման, ինչպես նաև Իվանեի ու նրա որդի Ավագի՝ եկեղեցու դիմաց թաղվելու մասին: Հետագայում այս հաղորդմանը չվստահելու հիմնական նպատակն է եղել եկեղեցու կառուցումը Կյուրիկյաններին վերագրելը:

Ընդհանրապես, եկեղեցու կառուցման ժամանակը ետ տանելու, վերջինիս՝ վանքի քաղկեդոնականացումից առաջ կառուցված լինելու տեսակետի երևան գալը նպատակ է ունեցել և ունի «հայկականացնել» եկեղեցին, որի անհրաժեշտությունը չկա ամենևին, քանի որ Պղնձահանքի Ս. Աստվածածինը հայկական քաղկեդոնիկ ճարտարապետության ժամանակի ամենանշանավոր տաճարն է, որն ուղղակի անհնար է չդիտարկել հայկական ճարտարապետության զարգացման ընդհանուր շղթայում: Առանձնանալով յուրահատուկ ոճով, դեկորատիվ հարդարանքով եկեղեցին սերտորեն և օրգանապես կապվում է միաբնակ հայերի ստեղծագործությանը՝ ներկայացնելով ճարտարապետական ու պատմական մեծ արժեք: Անշուշտ, Ս. Աստվածածնի հորինվածքը, հիմքում ունենալով հայկական ավանդական կառուցողական սկզբունքներն ու ավանդույթները, համաչափական համակարգը՝ իր մեջ ներառել է նաև վրացական ճարտարապետության տարրեր:

Դեռևս նախորդ դարի 20-30-ական թվականներին, երբ նոր սկսվում էր Հայաստանի վրացերեն արձանագրությունների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, կարծիքներ են հնչել, որ պատմիչների կողմից հիշատակվող՝ Իվանե Երկայնաբազուկի կողմից կառուցված եկեղեցին ոչ թե Պղնձահանքի Ս. Աստ-

վածածինն է, այլ խոսքը գնում է մեկ այլ կառույցի մասին, մասնավորապես՝ Լ. Մելիքսեթ Բեկը Պղնձահանք տեղանունը նույնացրել է Թեժառույքի վանքի հետ, ինչն արդյունք էր նյութի ոչ բավարար ուսումնասիրության: Տեսակետը հետագայում, բնականաբար, հերքվել է [2, էջ 201]:

Մյուս վարկածը, որ կասկածի տակ է առնում Ս. Աստվածածին եկեղեցու՝ ի սկզբանե Իվանե Զաքարյանի կողմից կառուցված լինելու փաստը՝ շինությունը վերջինիս կողմից վերակառուցված լինելու տեսակետն է, որն էլ արդյունքն է եկեղեցու ճարտարապետության ու կառուցվածքի ոչ պատշաճ ուսումնասիրության: Ակնառու է, որ Ս. Աստվածածինն իրականացվել է մեկ շնչով ու մտահղացմամբ: Շինության կառուցվածքում որևէ ձևափոխության ու վերակառուցման հետք չի նշմարվում: Ակնհայտ է նաև, որ պատերի ներքին մակերեսներն ի սկզբանե իրականացված են եղել ոչ սրբատաշ քարի շարվածքով՝ հետագայում որմնանկարների իրականացման նպատակով, երևույթ՝ բնորոշ ժամանակի հայկական քաղկեդոնիկ կառույցներին: Վարկածն, այսպիսով, չի հիմնավորվում որևէ կոնկրետ օրինակով, չի մատնանշվում վերակառուցման ենթակված կամ էլ նախնական շինությունից պահպանված որևէ հատված: Այս պարագայում հնարավոր է միայն մեկ տարբերակ՝ այն է, որ Իվանե Երկայնաբազուկը հիմնովին քանդել է ենթադրյալ եկեղեցին և տեղում կառուցել է Ս. Աստվածածինը, քանի որ վերջինիս ճարտարապետահատակագծային հորինվածքը՝ ինչպես կտեսնենք, բնորոշ է միայն ժամանակի քաղկեդոնիկ կառույցներին: Այսինքն, Իվանե Երկայնաբազուկի կողմից կառուցված եկեղեցին որևէ աղերս չի կարող ունենալ մինչ այդ՝ Կյուրիկյանների տիրապետության շրջանում կառուցված, բնականաբար, հայկական միաբնակ ճարտարապետությունը ներկայացնող ենթադրյալ շինության հետ:

Ամենատարածված վարկածը, ըստ որի Ս. Աստվածածինը կառուցվել է Կյուրիկյանների օրոք, փորձ է արվում հիմնավորել վանքի մոտակայքում՝ Այոր կոչվող տեղանքում գտնվող (ներկայումս անհիմն տեղահանված) խաչքարի թիկունքին, 1188 թ. Կյուրիկե Բ-ի դուստր Մարիամ իշխանուհու արձանագրությամբ՝ **«ԵՍ ՄԱՐԻԱՄ ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷԻ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶՊՂԸՆՁԱՀԱՆԱՑՍ ՀՈՂՀԱՏԻ ՍԲ ԱԾԱԾԻՆՍ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ԶՄԵԶ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԵՑԷՔ: ԹՈՒ ՈԼԷ (1188)»:** Այստեղ հիշատակված Ս. Աստվածածինն էլ հաճախ փորձ է արվում նույնացնել եկեղեցու, կամ էլ վանքի կառուցման հետ [2, էջ 202]:

Մարիամ իշխանուհին, ով հայտնի է իր շինարարական ակտիվ գործունեությամբ, կառուցել է Քոբայրավանքի Մարիամաշեն եկեղեցին (1171 թ.), Հաղբատի վանքի տապանատունը (1185 թ.), մասնակցել է Սանահինի վանքի Ամենափրկիչ ժամատան (1181 թ.) շինարարությանը: Նկատենք, որ հայկական միաբնակ այս բոլոր կառույցներում շինարարական արձանագրությունները փորագրված են կառույցների որմերին կամ սյուներին: Պղնձահանքի Այորի խաչքարը, որն իր կառուցվածքային և քանդակազարդման հորինվածքով ու մշակմամբ նույնանում է հատկապես Հաղբատի Մարիամաշեն գավթի խաչքարերի հետ, ի սկզբանե տեղադրված է եղել եկեղեցուց բավական հեռու, վանական համալիրից դուրս: Այն իր ոճական առանձնահատկություններով որևէ աղերս չունի

Ս. Աստվածածին եկեղեցու՝ քաղկեդոնիկ հուշարձաններին բնորոշ հարդարանքի ոճականության հետ:

Համադրելով Այորի խաչքարի արձանագրությունը Մարիամ Իշխանուհու երկու շինարարական վկայագրերի հետ, նկատենք, որ Քոբայրավանքի Մարիամաշեն եկեղեցու պսակին և բարավորին փորագրված, շինության կառուցմանը վերաբերող արձանագրության մեջ գրված է. «շինեցի կաթողիկես», Հաղբատի տապանատանը. «շինեցի տունս աղոթից»: Այորի խաչքարի արձանագրության մեջ, սակայն, ի տարբերություն այս երկուսի, օգտագործված չէ «շինեցի» բառը, այլ առկա է «կանգնեցի» ձևը, որն, անկասկած, վերաբերում է նույն Աստվածածնի խաչքարին, որն էլ ակներևաբար սահմանանիշ կոթող է: Միջնադարում նմանատիպ բազում սահմանանիշ խաչքարեր տեղադրվել են որոշակի տիրույթների սահմաններին՝ պատկանելիությունը մատնանշելու նպատակով:

Հատկանշական է Զաքարե Ամիրսպասալարի՝ Հառիճավանքի Ս. Աստվածածին եկեղեցու 1201 թ. շինարարական արձանագրությունը, ուր հիշատակվում և վերահաստատվում են ընծայված վանքապատկան տիրույթները, վերջինների սահմանները **«ԵՒ ԶԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆՔ ՈՐ ԲՈՒՆ ԼԵԱԼ ԷՐ ՀԱՍՏԱՏԵՑԻ, ՍԱՀՄԱՆ ԽԱՉԷ Ի ՀԱՌԻՃՈՅ ԳԵՏՆ...»:** Ուշագրավ է նաև նույն արձանագրության մեջ **«ԸՆԾԱՅԵՑԻ Ի ՍՈՒՐԲ ԱԾԱԾՆԻՍ ԲՈԼՈՐ ԻՒՐ ԱՄԵՆ ՀՈՂԱՀԱՏՈՎ...»** հիշատակությունը: Հնարավոր է, որ «հողհատ» տերմինն այստեղ նշանակում է տարածքի որոշակի հատված: Պ. Մուրադյանը հնարավոր է համարում, որ Պղնձահանքի դեպքում տերմինը մատնանշում է հանք ունեցող տեղանք [2, էջ 202]:

Հայտնի է, որ Պղնձահանքում դեռևս միջնադարից շահագործվել են պղնձի հանքավայրեր, որտեղից էլ՝ տեղանվան ծագումը: Ուստի ակներև է, որ խաչքար-սահմանաքարը կանգնեցված է եղել Մարիամ իշխանուհու կողմից Պղնձահանքի հանքավայրի՝ «հողհատի» սահմանագլխին՝ որպես սահմանանիշ: Հավելենք նաև, որ Մարիամ Կյուրիկյանը, ով ըստ Հաղբատի վանքի Մեծ գավթի 1200 թ. արձանագրության՝ միաբանել է Ս. Նշանին և հետագայում թաղվել է նույն այդ գավթում, բնականաբար, չէր կարող 1188 թ. կառուցել Պղնձահանքի հունադավան Ս. Աստվածածինը, և Այորի խաչքարը որևէ առնչություն չի կարող ունենալ եկեղեցու հետ:

2017 թ. վանքից մոտ 300 մ հեռավորության վրա գտնվող Մարիամ իշխանուհու կողմից կանգնեցված նշված Այորի խաչքարը տեղահանվել և առանց որևէ հիմնավորման տեղափոխվել է վանական համալիրի տարածք՝ ակներևաբար նպատակ ունենալով «հիմնավորել» Ս. Աստվածածին եկեղեցու՝ Կյուրիկյանների կողմից կառուցված լինելու վարկածը: Միայն փորձելով ուսումնասիրել և պարզել խաչքարի տեղադրման նախնական տեղանքը և վերջինս տեղափոխելով բուն միջավայր հնարավոր կլինի խուսափել հետագա թյուրիմացություններից ու շտկել այս անհիմն ու ինքնանպատակ գործողությանը:

Պղնձահանքի Ս. Աստվածածինը կառուցվել է պատմական այն բարդ ժամանակահատվածում, երբ բավական սուր բնույթ են ստանում դավանաբանա-

կան վեճերը Հայ և Վրաց եկեղեցիների միջև: Զաքարե Ամիրսպասալարը՝ գիտակցելով հայ-վրաց զինակցության նշանակությունը, ձգտում էր հարթել հարևան ժողովուրդների միջև ծագած դավանաբանական հակասությունները: Եկեղեցիների մերձեցմանն էին ուղղված Հայկական եկեղեցու ծիսակարգի մեջ որոշակի բարեփոխումների իրականացմանը վերջինիս ջանքերը: Երկաբնակություն դավանող Իվանեն իր գործունեությամբ աշխատում էր հավասարություն հաստատել տարբեր կրոնական համայնքների միջև: Վերջինս քաղկեդոնիկ եկեղեցիներին զուգահեռ կառուցել ու վերականգնել է նաև Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող վանքեր ու եկեղեցիներ:

Այսպիսով, դառնալով ազատագրված Հայաստանի կառավարիչներ՝ Իվանե և Զաքարե եղբայրները խնդիր ունեին ստեղծել հանդուրժողականության մթնոլորտ վրաց ուղղափառ և հայ միաբնակ, ինչպես նաև արդեն վրացադավան հայկական համայնքների միջև: Այս տրամադրությունները չէին կարող իրենց արտահայտությունը չգտնել ճարտարապետության մեջ և, հատկապես, Զաքարյան եղբայրների կարևորագույն, առանցքային կառույցներում: Այս տեսանկյունից դիտարկելով և համադրելով ժամանակի ամենանշանավոր և կարևորագույն միաբնակ ու քաղկեդոնիկ եկեղեցիները՝ Զաքարեի կողմից 1201 թ. կառուցված Հառիճավանքի և Պղնձահանքի տաճարները՝ վերջինների ճարտարապետության մեջ մարմնավորված ենք տեսնում քաղաքական գործիչների ձգտումները, ծրագրերն ու նպատակները: Խախտելով մինչ այդ ընդունված ավանդույթները՝ երկու եկեղեցիներում փորձ է արվում մոտեցնել միաբնակ ու ուղղափառ կառույցներում մինչ այդ ընդունված ավանդական լուծումներն ու կանոնները: Իվանե Երկայնաբազուկը, ով ըստ Պղնձահանքի եկեղեցու որմնանկարների ուսումնասիրության, անմիջական մասնակցություն է ունեցել վերջինների թեմատիկ ընտրությանը, հավանական է, որ անմասն չի մնացել նաև կառույցի հորինվածքի, ճակատային լուծումների խնդիրներին [8, էջ 83, 84]: Նույնը կարելի է ենթադրել նաև Զաքարեի պարագայում:

Խորհրդանշական է Հառիճավանքի միաբնակ եկեղեցու արևելյան ճակատին երկու դավանաքների հետևորդ՝ Զաքարյան եղբայրների կտիտորական քանդակը, որի աջակողմյան հատվածում Թամար թագուհու խորհրդանիշն է: Հորինվածքը Պղնձահանքի հյուսիսային ճակատի շինարարական արձանագրության մարմնավորումն է, Զաքարյան եղբայրների քաղաքականության խորհրդանշական արտահայտությունն ու պատկերը:

Հատկանշական է նաև, որ Հառիճավանքի ու Պղնձահանքի եկեղեցիները պսակված են եղել հովհարաձև վեղարներով՝ կառուցվածք, որը բնորոշ է հայկական ճարտարապետությանը: Վեղարի այս տիպն առկա է հիմնականում իշխանական տներին պատկանող եկեղեցիներում (Խծկոնք, Ամբերդ, Գանձասար, Հովհաննավանք): Զաքարյանների իշխանությունը, տարածվելով Հյուսիսային Հայաստանում, ընդգրկում էր Զաքարե և Իվանե եղբայրներին ենթակա տարածքները: Այստեղ էլ կառուցվում են հովհարաձև վեղարով պսակված ժամանակի միաբնակ և քաղկեդոնիկ գլխավոր՝ Հառիճավանքի և Պղնձահանքի եկեղեցիները:

Հառիճավանքի Ս. Աստվածածին եկեղեցու հատակագծային հորինվածքը ներկայացնում է ավանդական գմբեթավոր դահլիճ տիպը՝ դասական համաչափություններով: Նորամուծությունն այստեղ զույգ «արքայական» օթյակներն են: Դիտարկելով Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցու ճարտարապետահատակագծային հորինվածքն ու դեկորատիվ հարդարանքը՝ ի սկզբանե պետք է բացառել վերջինիս՝ նախաքաղկեդոնական շրջանում կառուցված լինելու վարկածը: Բանն այն է, որ կառույցը ներկայացնում է երկմույթ գմբեթավոր եկեղեցիների տիպը: Հորինվածքն այս բնորոշ է հիմնականում ժամանակի քաղկեդոնիկ եկեղեցիներին: Այս տիպի մեկ տասնյակից ավելի հայկական և վրացական եկեղեցիներ են կառուցվել XII դարի վերջին և XIII դարասկզբի ժամանակահատվածում: Շինությունները կենտրոնացած են հիմնականում Քուռ գետից հարավ ընկած տարածքում՝ Իվանե Զաքարյանի տիրապետության տակ գտնվող և հարող տարածքներում [3, էջ 264-276]:

Երկմույթ գմբեթավոր եկեղեցիների հնագույն օրինակը Աքորիի՝ ներկայումս հիմնովին ավերված հունադավան եկեղեցին է՝ կառուցված Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի կողմից 7-րդ դարում: Հորինվածքն այս, փաստորեն, 500 տարի անց կրկնվել է հայ քաղկեդոնականների կողմից Աքորիի եկեղեցում [5, էջ 125-139]: Վերջինս էլ օրինակ է հանդիսացել տարածաշրջանի հայկական (Պղնձահանք, Խուճապի վանք, Կիրանց) և վրացական (Ծուղրուղաշենի, Բեթանիա, Փիտարեթի, Կինցվիսի, Թիմոթեսուբանի) շինությունների համար: Պղնձահանքի Ս. Աստվածածինը, կառուցված լինելով Իվանե Երկայնաբազուկի կողմից, բնականաբար, առանձնանում է այս խմբի եկեղեցիներից իր չափերով, դեկորատիվ հարդարանքով, հատակագծային ու համաչափական յուրահատուկ լուծումներով: Այսպես՝ եթե երկմույթ գմբեթավոր եկեղեցիներում գմբեթը հիմնականում տեղադրված է լինում լայնական առանցքից դեպի արևելք, ապա Պղնձահանքում այն գտնվում է երկայնական առանցքի կենտրոնում, ինչպես ժամանակի հայկական գմբեթավոր դահլիճ հորինվածքներում:

Ուշագրավ է նաև Պղնձահանքի եկեղեցում արևելյան ճակատի եռանկյունաձև խորշերի տեղադրությունը: Ուղղափառ երկմույթ, նաև՝ քառամույթ հորինվածքներում խորշերը, որպես կանոն, գտնվում են արևելյան ճակատի առանցքին ավելի մոտ, քան միաբնակ գմբեթավոր տիպի եկեղեցիներում, ինչը պայմանավորված է միջին և եզրային նավերի լայնական չափերի հարաբերությունների տարբերությամբ: Եթե գմբեթավոր դահլիճների դեպքում այն կազմում է 5:1, ապա երկմույթ հորինվածքներում՝ 3:1: Եռանկյունաձև խորշերը, հանդիսանալով ճակատային դեկորատիվ տարրեր, ունեն նաև կառույցի պատերը բեռնաթափող կոնստրուկտիվ նշանակություն, ուստի այս տեսակետից ճիշտ կլիներ Պղնձահանքի եկեղեցու եռանկյունաձև խորշերի տեղադրումը նույն հարաբերությամբ՝ ինչպես նմանատիպ հորինվածքով վրացական եկեղեցիներում: (Բեթանիա, Քվատախևի, Կինցվիսի): Այստեղ, սակայն, ճակատային բաժանումները կատարված են գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցիներում կիրառվող ավանդական սկզբունքով, ինչպես, օրինակ, Հառիճավանքում: Նշենք նաև, որ

նմանատիպ մոտեցում է առկա նաև հայկական քաղկեդոնիկ Խուճապի և Կիրանց վանքերի եկեղեցիներում:

Պղնձահանքի տաճարում մեկ այլ լուծում նույնպես բնորոշ է հայկական միաբնակ հուշարձաններին՝ արևելյան և արևմտյան ճակատներում ավանդատների ծածկերը սկսվում են համարյա կենտրոնական ճակտոնի քիվերի եզրային ստորին նիշից՝ կազմելով վերջինիս լանջերի շարունակությունը: Արդյունքում՝ ճակատները դիտվում են առավել ամբողջական, ինչը բնորոշ է հայկական ճարտարապետությանը՝ ի տարբերություն վրացական եկեղեցիների, ուր ճակատները ջլատվում են կենտրոնական ծավալի ընդհանուր մակերեսից ավելի բարձր դիրքով, ավանդատների առավել ցածր տեղադրմամբ:

Մինչ քննարկվող ժամանակաշրջանը՝ վրացական եկեղեցիների ճակատային դեկորատիվ լուծումները ներկայացնում են ճոխ, հիմնականում ուղղահայաց գոտիներով ջլատված, ակտիվ, լուսաստվեր ստեղծող հարդարանք: Հայկական ճարտարապետությանը, սակայն, բնորոշ են ճակատային պատերի հարթ մակերեսները, ուր նույնիսկ դեկորատիվ տարրերը ոչ թե խախտում, այլ առավել ընդգծում են գերիշխող պատի մակերեսը: Քննարկվող եկեղեցիներում, սակայն, ականատես ենք հակառակ պատկերի: Հառիճավանքում եկեղեցու ճակատները ներկայացված են ակտիվ դեկորատիվ հարդարանքով, ուր ուղղահայաց գոտիները զուգորդվում են հայկական ճարտարապետությանը բնորոշ հորիզոնական ջլատումներով: Այստեղ, փաստորեն, առաջին անգամ խախտված է ճակատների զուսպ, անպաճույճ մշակման ավանդույթը: Հատկանշական է և պատահական չէ նմանատիպ ոճականությամբ խաչի հորինվածքի առկայությունը Իվանե Երկայնաբազուկի կողմից կառուցված Հաղարծնի գավթի արևմտյան ճակատին [7, էջ 1, 2]:

Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցում ականատես ենք հակառակ երևույթին: Այստեղ առկա է հայկական ճարտարապետությանը բնորոշ պատի հարթ մակերևույթը: Ճակատներին առկա զույգ պատուհանների միջից բարձրացող խաչի քանդակազարդ հորինվածքները ոչ թե խախտում, այլ ընդհակառակն՝ առավել ընդգծում են հարթ պատի գերիշխող լինելը: Այս նոր՝ անցյալում չհանդիպող քաղկեդոնականությունը խորհրդանշող հորինվածքը, հետագայում կրկնվում է հայկական քաղկեդոնիկ և վրացական եկեղեցիներում: Սակայն Պղնձահանքը միակն է, ուր վերջինս ներկայացված է երեք ճակատներում, ինչը շեշտում է հայկական քաղկեդոնիկ գլխավոր տաճարի նշանակությունը:

Ուշադրության են արժանի նաև Պղնձահանքի հյուսիսային և արևմտյան շքամուտքերը, որոնք ներկայացնում են հայկական ճարտարապետությանը բնորոշ հորինվածքներ (Հաղբատ, Սանահին, Կեչառիս և այլ): Վրացական ճարտարապետության մեջ նմանատիպ շքամուտքերը հազվադեպ են հանդիպում: Այստեղ վրացական ճարտարապետությանը բնորոշ զարդանախշերի կողքին հանդես է գալիս հայկական ճարտարապետության մեջ լայնորեն տարածված ավանդական երկրաչափական զարդանախշերով հարդարանք:

Պղնձահանքի Ս. Աստվածածինն, այսպիսով, իր բացարձակ չափերով Իվանե Երկայնաբազուկին ենթակա տարածքի ամենամեծ, հայկական ավան-

դական հովհարաձև վեղարով պսակված գլխավոր քաղկեդոնիկ կառույցն է: Եկեղեցու հիմքում առաջին անգամ հայ քաղկեդոնականների կողմից դեռևս VII դարում երևան եկած երկմույթ գմբեթավոր հորինվածքն է, որի համադրումն ու հարմարեցումը գմբեթավոր սրահ տիպի եկեղեցիներում ընդունված համաչափություններին, ինչպես նաև հայկական հուշարձաններին բնորոշ ճակատային լուծումները վկայում են, որ կառույցն իրականացվել է հայկական ավանդական ճարտարապետության կանոններին ու մոտեցումներին տիրապետող հեղինակի կողմից: Վրացական ճարտարապետությանը բնորոշ տարրերի առկայությունը խոսում է կառուցմանը նաև վրացի վարպետների հնարավոր մասնակցության մասին: Նույն երևույթն է առկա նաև եկեղեցու որմնանկարների հեղինակ նկարիչների ընտրության հարցում: Այստեղ աշխատանքներին մասնակցել են հայ, վրացի և հույն վարպետներ [9, էջ 93-113]: Վերջապես, եկեղեցու ճակատներին առկա վրացական «ծաղկած խաչի» ավանդական հորինվածքի կողքին քաղկեդոնականության էությունն առանձնակի ուժգնությամբ ներկայացնող նոր հորինվածքների ի հայտ գալը բացահայտում և ակնհայտ են դարձնում եկեղեցու կտիտորին: Այսպիսով՝ չկա որևէ ծանրակշիռ հիմնավորում կասկածելու պատմիչների՝ Ս. Աստվածածին եկեղեցին Իվանե Երկայնաբազուկի կողմից կառուցված լինելու տեղեկությանը: Ավելին՝ փաստը հաստատվում է նաև եկեղեցու դիմաց Իվանեի և որդու՝ Ավագի թաղվելու վերաբերյալ Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու կողմից հիշատակություններով: Բանն այն է, որ Ս. Աստվածածին եկեղեցուն հետագայում արևմուտքից կցված կառույցն իր հորինվածքով և հարդարանքով մեմորիալ կառույց է, իսկ վերջինի դիմաց կառուցված սյունասրահը հուշում է թաղման տեղը և իր հորինվածքով աղերսվում է Սանահինի Կյուրիկյանների դամբարանին [4, էջ 154-159]:

Այսպիսով՝ առկա բոլոր տվյալները՝ պատմական, մատենագրական, ճարտարապետական-տիպաբանական, վերջինների համադրումն ու վերլուծությունը միանշանակ փաստում են, որ Պղնձահանքի Ս. Աստվածածինը կառուցել է Իվանե Երկայնաբազուկը: Եկեղեցին XII-XIII դարերի հայ քաղկեդոնականների ճարտարապետական գործունեության ամենանշանավոր հուշարձանն է, որը հանիրավի մինչ այժմ չի արժանացել պատշաճ ուշադրության ու գնահատականի, չի գտել իր արժանի տեղը հայկական ճարտարապետության պատմության շղթայում: Պատճառը, թերևս, եկեղեցու ուղղափառ բնույթն է, և անընդունելի ու անիմաստ են առանց որևէ հիմնավորման կառույցը միաբնակ եկեղեցու «վերափոխելու» ոչ մասնագիտական սիրողական մակարդակի գործողությունները:

Պղնձահանքի Ս. Աստվածածինը և, ընդհանրապես, հայ քաղկեդոնականների ճարտարապետական և ոչ միայն ճարտարապետական գործունեությունը ներկայացնում են արևելաքրիստոնեական մշակույթի հարուստ և յուրահատուկ մի շերտ, որի ուսումնասիրությունն ու, հատկապես, համադրումն ավանդական հայկական ճարտարապետության ու մշակութային ժառանգության հետ առավել ամբողջական կարող են դարձնել մեր արվեստի ու պատմության քննարկվող ժամանակահատվածը: Այն կարող է լույս սփռել նաև ժամանակի քաղաքական

դավանաբանական խնդիրների վրա: Ավելին, հուշարձանների համատեղ դիտարկումը հնարավորություն է տալիս ոչ միայն ըստ արժանվույն գնահատել հայկական քաղկեդոնիկ հուշարձանները, այլ նաև նոր լույսի տակ դիտարկել միաբնակ կառույցները:

Եզրակացություն

Պղնձահանքի (Ախթալա) Ս. Աստվածածին եկեղեցին Իվանե Զաքարյան Երկայնաբազուկի կողմից կառուցված լինելու վերաբերյալ Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը, որը երբեմն փորձ է արվում համարել ոչ հավաստի, հիմնավորվում է կառույցի ճարտարապետահատակագծային հորինվածքով՝ բնորոշ քաղկեդոնիկ եկեղեցիներին, ճակատային լուծումներով, ինչպես նաև Զաքարե Ամիրսպասալարի կողմից Հառիճավանքում կառուցված Ս. Աստվածածին եկեղեցու հետ համադրմամբ: Եկեղեցու ճարտարապետության մեջ արտացոլվում են Իվանե Երկայնաբազուկի մոտեցումներն ու վերաբերմունքը քաղաքական, դավանաբանական ու ազգային խնդիրներին, և չկա որևէ հիմնավոր կռվան կասկածելու վերջինի կողմից Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանը:

Գրականություն

1. Կիրակոս Գանձակեցի. Պատմություն հայոց. Երևան, 1961:
2. Մուրադյան Պ. Հայաստանի վրացերեն արձանագրությունները. Երևան, 1977:
3. Ջալալյան Ա. XII-XIII դարերի հայկական քաղկեդոնիկ գմբեթավոր եկեղեցիների ճարտարապետությունը, «Կանթեղ», № 3, 2017, էջ 264-276:
4. Ջալալյան Ա. Ախթալայի վանական համալիրի միանավ եկեղեցու ճարտարապետական հորինվածքն ու նշանակությունը, Հայ արվեստի հարցեր, № 4, 2012, էջ 154-161:
5. Ջալալյան Ա. Հայաստանի և Վրաստանի երկմույթ գմբեթավոր եկեղեցիների տիպի ծագումնաբանությունը, ՎԷՄ, 2014, № 3, էջ 125-134:
6. Վարդան. Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի. Վենետիկ, 1962:
7. Измайлова Т. Связи архитектурного декора грузинских и армянских памятников XIII века, IV международный симпозиум по грузинскому искусству. Тбилиси, 1983.
8. Лидов А. Искусство армян-халкедонитов, ПВХ, 1990, № 4, с. 75-87.
9. Lidov A. The mural paintings of Akhtala. Moscow, 1991.

References

1. Kirakos Gandakeci. Patmutyun hayoc. Yerevan, 1961.
2. Muradyan P. Hayastani vraceren ardanagrutyunnery. Yerevan, 1977.
3. Jalalyan A. XII-XIII dareri haykakan qaghkedonik gmbetavor ekeghecineri chartarapetutyuny, “Kantegh”, № 3, 2017, ej 264-276.
4. Jalalyan A. Axtalayi vanakan hamaliri mianav ekeghecu chartarapetakan horinvacqn u nshanakutyuny, Hay arvesti harcer, № 4, 2012, ej 154-161.
5. Jalalyan A. Hayastani ev Vrastani erkmuyt gmbetavor ekeghecineri tipi cagumnabanutyuny, VEM, 2014, № 3, ej 125-134.
6. Vardan. Hawaqumn patmutean Vardanay Vardapeti. Venetik, 1962.
7. Izmajlova T. Svazi arhitekturnogo dekora gruzinskih i armjanskih pamjatnikov XIII veka, IV mezhdunarodnyj simpozium po gruzinskomu iskusstvu. Tbilisi, 1983.
8. Lidov A. Iskusstvo armjan-halkedonitov, PBH, 1990, № 4, s. 75-87.

ИВАНЕ ДОЛГОРУКИЙ – КТИТОР ЦЕРКВИ СВ. БОГОРОДИЦЫ ПХНДЗААНКА (АХТАЛА)

АЛЕКСАНДР ДЖАЛАЛЯН*

Для цитирования: Джалалян, Александр. “Иване Долгорукий ктитор церкви Св. Богородицы Пхндзаанка (Ахтала)”. *Искусствоведческий журнал,* N 1 (2024): 169-182. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-169

В эпоху расцвета Захаридской Армении правитель части армянских территорий Иване Захарян Долгорукий в конце XII века перешедший из армяно-монофизитской в халкедонитскую веру, превратил принадлежавший монофизитам Кюрикидам монастырь Пхндзаанка (Ахтала) в крупнейший халкедонитский центр Северной Армении. Здесь, по свидетельству Киракоса Гандзакеци и Вартана, был построен храм Св. Богородицы, ктитором которого являлся Иване Долгорукий, где впоследствии и был похоронен. Достоверность этих сведений часто подвергается сомнениям и строительство храма, без учета архитектуры, декоративного убранства, планировочной композиции храма, приписывается Кюрикидам, в частности, княгине Мариам.

Сопоставление исторических, библиографических данных с архитектурно-планировочными, декоративно-композиционными и пропорциональными решениями церкви, рассмотрение в совокупности с армяно-монофизитскими памятниками и особенно с архитектурой церкви Св. Богородицы в Ариче, построенной братом Иване – Закаре Долгоруким, свидетельствуют, что ктитором церкви Пхндзаанка несомненно является Иване Долгорукий.

В архитектуре двух главнейших храмов Захаридской Армении, построенных братьями – монофизитом Закаре и халкедонитом Иване – отражена верность политических деятелей национальным традициям, а также идея сближения и объединения христианских церквей.

Ключевые слова: церковь Св. Богородицы Пхндзаанка, Иване Долгорукий, церкви с двумя свободно стоящими колоннами, армяне-халкедониты, Акори, Закаре Амирспасалар [военачальник], церковь Св. Богородицы Аричаванка.

* Научный сотрудник отдела архитектуры Института искусств НАН РА, alikjalalyan@yahoo.com статья представлена 24.11.2023, рецензирована 17.01.2024, принята к публикации 03.06.2024.

IVANE ZAKARYAN – THE FUNDER OF THE CHURCH OF THE HOLY MOTHER OF GOD IN AKHTALA-PGHNDZAHANK (AKHTALA)

ALEKSANDR JALALYAN*

For citation: Jalalyan, Aleksandr. "Ivane Zakaryan – the funder of the Church of the Holy Mother of God in Akhtala-Pghndzahank (Akhtala)". *Journal of Art Studies,* N 1 (2024): 169-182. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-169

Ivane Zakaryan, the ruler of part of Armenian territories during the heyday of Zakarid Armenia, adopted Chalcedonian Christianity at the end of the XII century and turned the Pghndzahank monastery, previously owned by the Monophysite Kyurikids, into a major Chalcedonian center of Northern Armenia. Here, according to the testimony of Kirakos Gandzaketsi and Vardan Areveltsi, the Church of the Holy Mother of God was funded by Ivane the Long-Armed, where he was subsequently buried. The reliability of this information is often questioned, and the construction of this Church is attributed to the Kyurikids, in particular to Princess Mariam, without taking into account the architecture, decoration and planning composition of the temple.

A comparison of historical and bibliographic data with the architectural-planning, decorative-compositional and proportional solutions of the church, consideration of the structure in conjunction with the Armenian Chalcedonian, Georgian, Armenian Monophysite temples, especially with the architecture of the Church of the Holy Mother of God in Harich, built by Ivane's brother Zakare Amirspasalar [Commander-in-Chief], proves undoubtedly that the ktitor of the Church in Pghndzahank was none but Ivane Zakaryan.

The architecture of the two main churches of that time in Zakarid Armenia, built by the brothers – Monophysite Zakare and Dyophysite Ivane, reflects the worldview of politicians, devotion to national traditions, as well as the idea of rapprochement and unification of the Christian churches.

Key words: The Church of the Holy Mather of God in Pghndzahank, domed churches with two free-standing pillars, Ivane Zakaryan, Akori, Zakare Amirspasalar [Commander-in-Chief], the Church of the Holy Mother of God in Harichavank, Armenian Chalcedonians.

* Researcher at the Department of Architecture of NAS RA Institute of Arts, alikjalalyan@yahoo.com. The article was submitted on 24.11.2023, reviewed on 17.01.2024, accepted for publication on 03.06.2024.

Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցի

Հառիճավանքի Ս. Աստվածածին եկեղեցի



Հառիճավանք, արևելյան ճակատ